կարծեաց, մեծ հաւանականութեամբ երկու անձերը նոյն են, քանի որ մանաւանդ՝ վաղեմի յիշատակութիւն մ'ալ ունինք թէ Սաբայի Զորին մէջ հայկական վանք մը գոյութիւն ունեցած է։ Հայոց Անաստաս վրդ.ի Վանօրէից Ցուցակին մէջ կը կարդանք. «Այլ վանք Սիւնեաց ի Զորն Սաբայի». այս վանքը անտարակոյս Մար-Սաբայի վանքէն տարբեր էր և հայկական. հետքը կորսուած ուրիշ վանօրէից նման, այս փոքրիկ վանքն ալ, իր կործանումէն յետոյ, անյիշատակ մնացած է մեր կարծեօք։ Սաբայի Զորին հայկական այս վանքը՝ հայազգի Երեմիայի կողմէն կառուցուած վանքը պէտք է ըլլայ։ Սիւնեաց անուամբ կը յիշուի այն պատճառաւ որ Է. կամ Ը. դարուն, Սիւնիք նորոգած են զայն և կոչուած է իրենց անուամբ։ Ս. Տեղեաց մէջ Սիւնեաց նախարարութիւնը ունէր ուրիշ չորս վանքեր եւս, ըստ Անաստաս վարդապետի Ցուցակին։

Գ. Մար-Սաբայի Հայ Միաբանութիւնը Զեռագիր Ցիշատակարանի մը համաձայն.

Մար-Սաբայի Հայ Միաբանութեան նախնական կազմութենէն մինչև ԺԵ. դարու կէսը նոյն Միաբանութեան պատմական կեանքի մասին ոչ է տեղեկութեան չենք հանդիպած. այլ և այլ ժամանակ նոյն վանքին վրայ տեղի ունեցող յարձակումներուն հետևանքով, Միաբանութիւնը անտարակոյս ունեցած է իր ընդհատները և վանքին վերանորոգման՝ դարձեալ վերսկսած է իր կանոնաւոր կեանքը։ Այս պարագան ցոյց կու տայ մեզ հայերէն ձեռագրական յիշատակարան մը, ԺԵ. դարուն, ընդօրինակուած Մար-Սաբայի վանքին մէջ. որմէ կը հասկցուի թէ Հայ Միաբանական կեանքը տեւած է մինչեւ ԺԵ. դարուն կէսը, եւ հաւանաբար վերջ գտած 1639ին, Սերպերուն նոյն վանքէն քաշուելէն յետոյ։ Այդ ձեռագրական յիշատակարանը ընդօրինակուած է Հալէպի Ս. Քառասունք եկեղեցւոյն սեպհական Աւետարանէն (Թ. 23). նոյնութեամբ զայն կը դնենք հոս.

«. . . . . Յամ ԻՆՆԵՐԷՐՈՐԴԻ ԵՒ ՀԷՐՈՐԴԻ ԹՈՎԱՆՆԻ հայկազանց տոմարի (904 = 1455), ասարդաքորդեալ եղև ասորաձախաս և ՀԷՆԱՍՊՈՍ ասրբ Ա-Է-ԴԱՐԱՆ ՔՐԷՍՊՈՍԻ Ասորաձոյն ձերոյ։ . . . . . Զոր իմ ՁԵ-